

ԳՐԱԿԱՆ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀՆԴԵԻՐՈՊԱԿԱՆ ԵՒ ՀԱՅ ԼԵԶՈՒԱԲԱՆՈՒԹԵԱՆ
ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ.

Լեզուաբանութեան պատմութիւնն սկսւում է իսկապէս հնդեւրոպական համեմատական քերականութեան հիմնադիր Բոպպից, այսինքն 19-րդ դարի սկզբից: Սակայն լեզուի ուսումնասիրութեամբ զբաղուել են գիտնականները նաև առաջ՝ զանազան ազգերի մէջ և զանազան ժամանակներում և աւելորդ չի լինիլ համառօտ ծանօթութիւն ունենալ այդ նախապատրաստական գիտական աշխատանքների մասին:

Լեզուի ուսումնասիրութեամբ հնում զլխաւորապէս զբաղուել են հնդիկները, ապա նաև յոյներն ու հռոմայեցիք:

Հնդկաստանում կատարուած ուսումնասիրութիւններն ունին առանձնապէս կարեւոր նշանակութիւն, ուսումնասիրութեան նիւթ ծառայել է այդտեղ նախ և առաջ վեդաների լեզուն, որ համարւում էր աստուածների լեզու և պահպանւում էր յիշատակարաններում մեծ խնամքով՝ առանց որ և է փոփոխութեան: Սանսկրիտի շրջանում շնորհիւ լեզուի պատմական զարգացման մեծ տարբերութիւն է նկատւում վեդերենի և սանսկրիտի մէջ, ուստի վեդաներն ուղիղ հասկանալու ցանկութիւնը բնականաբար առաջ է բերում սրբազան գրքերի լեզուի ուսումնասիրութիւնը: Կազմւում են վեդաների մեկնութիւնների արտասանութեան կանոններ, որոնք ապացուցում են հնդիկների ֆոնետիքական խոր ըմբռնումը, յօրինւում են բառարաններ և այլն: Այդ բոլոր ուսումնասիրութիւնները պսակւում են Պանինիի հռչակաւոր քերականութեամբ (մօտ 4-րդ դար ն. Ք.), որտեղ առաջարկւում են սանսկրիտի լիակատար քերականական օրէնքները: Պանինիի քերականութիւնը իւր տեսակի մէջ ամենակատարեալն է համարւում ոչ միայն

Հնդկաստանում, այլ և բոլոր ազգերի մէջ մինչև համեմատական լեզուաբանութեան շրջանը (19-րդ դար) կազմուած բոլոր քերականութիւններէց: Այդ չափազանց սեղմ դրուածքը տարօրինակ մանրակրկիտ և ճիշտ բացատրութիւններ է պարունակում ինչպէս հնչիւնաբանական, այնպէս և ձևաբանական երևոյթների: Նա խիստ յարգի էր հնդկների մօտ, ուստի արժանացել է բազմաթիւ կոմմենտարների: 19-րդ դարում էլ նա ոչ միայն գնահատուեց ըստ արժանւոյն, այլ և ունեցաւ մեծ ազդեցութիւն լեզուաբանական հարցերի ճիշտ ըմբռնման վրայ:

Յոյները լեզուի այդքան խոր ըմբռնում չեն ունեցել: Նրանցում երկաշ ժամանակ հետաքրքրութեան կենտրոն էր կազմում հետեւեալ հարցը. ինչ կապ կայ լեզուի հնչիւնական կողմի և նրա նշանակութեան մէջ: Այդ և այլ հարցերով զբաղուել են դեռ հնում. յայտնի է, որ սոփեստները, որոնք միաժամանակ և լեզուի առաջին ուսուցիչներն էին, զբաղուել են լեզուական հարցերով: Աւագ սոփեստներից այդ ուղղութեամբ զբաղուել են Պոտոպորաս (genera, tempora, modi), Պոդիկոս (Հոմանիշ բառեր, տ. Պլատոնի Պոտոպորասում) և Հիպպիաս (տառեր և վանկեր):

Արիստոտէլ զարգացնում է մասունք բանիների զաղափարը, իսկ Ստոյնկեանները աւելի են խորացնում քերականական հարցերը:

Բայց յոյն քերականների փառաւոր շրջանը համարւում է Ալեքսանդրեան շրջանը, երբ գիտութեան բոլոր ճիւղերն ընդհանրապէս աւելի մանրամասն և լուրջ հետազօտութեան են ենթարկւում:

Ալեքսանդրեան շրջանում լեզուի լուրջ և բազմակողմանի ուսումնասիրութեան համար կար նոյնպիսի պատճառ, ինչպիսին մենք տեսնում ենք Հնդկաստանում: Այստեղ էլ անհասկանալի էր դարձել Հոմերոսի լեզուն, որով առանձին հետաքրքրութեամբ սկսում են զբաղուել այդ շրջանում: Այդ երևոյթը հասկանալու համար հետաքրքիր է համեմատել Հոմերոսի և այդ շրջանի յունական լեզուի տարբերութիւնը:

Ալէքսանդրեան և Պերգամի գիտնականները*) օգտուելով նաև նախորդ շրջանների փիլիսոփաների ուսումնասիրութիւններից, կազմում են լեզուի լիակատար քերականութիւնը, ո. (յատկապէս Պերգամեան կրատեաի ուղղութեամբ, այսինքն անոմալիայի սկզբունքով) սեպհականութիւն է դառնում Հռոմէական քերականների (սկսած Վարրոնի ուսուցիչ էլիուս Ստիլից) և նրանց կողմից ևս մի քանի լ.ացումներ ընդունելով (մանաւանդ շարահիւսական, ձայնարկութիւններ և այլն), ժառանգութիւն է մնում է. բոսական ազգերի՝ միջին դարերում, ապա նաև նոր ժամանակներում:

Հայերէնի քերականութիւնը զարգանում է յունարէնի անմիջական ազդեցութեան տակ (համեմ. Դիոնիսիոս

*) Սրանցից նշանաւորներն են Զենոդոտ Եփեսացին, պօէտ Կալլիմաքոս, Էրատոսթենէս Կիրենացին, Արիստոֆանէս Բիւզանդացին, Արիստարքոս, Ապոլլոդորոս Աթենացին և վերջին ժամանակները—Դիոնիսիոս Թրակացին, Քերականական հարցերի մանրակրկիտ ուսումնասիրութեան քիչ չը նպաստեց Ալէքսանդրեան գիտնականների (Արիստոֆանէսի և Արիստարքոսի) և Ստոյիկեանների և Պերգամեանների (Քրիզեապ. Կրատեա)՝ հաշակաւոր վէճը Անալոգիայի և Անամոլիայի մասին: Առաջինները, որոնք լեզուն համարում էին ἑξῆς, հաստատում էին լեզուի կանոնաւորութիւնը շնորհիւ անալիզիայի, պնդելով, որ նման ուղղականներից նման սեռականներ են ստացւում: Դեռ Արիստոֆանէս հինգ նորմ էր ստեղծել անուան համար՝ հիմք ունենալով սեռի նմանութիւնը, հոլովը, վերջաւորութիւնը, շեշտը և վանկերի թիւը (եթէ օր. Βίος ունենում է Βίαντος, իսկ Δούλις—Δούλου, պատճառը վանկերի թիւն է): Անոմալիստները (φύσει) այն կարծիքին էին, որ բառերն սկզբում (հիմքում) իրերի համապատասխան պատկերներն էին և մարդիկ կամայականօրէն հիմքերից առաջացրել են բառեր, աղաւաղելով նրանց սկզբնական ձևերը: Օր. իգական սեռի բառերը կարող էին սկզբում ունենալ արականի վերջաւորութիւն և ընդհակառակը, յոգնակի գործածուող բառերը սկզբում կարող էին եղակի գործածուելիս լինել կային: Անոմալիստների բացասական վերաբերմունքը դէպի լեզուի կանոնաւորութիւնը ստիպեց Ալէքսանդրեան գիտնականներին աւելի մեծ քանակութեամբ օրինակներ փնտռել և աւելի մանրակրկիտ հետազօտութեան ենթարկել լեզուական երևոյթները:

Թրակացու քերականութեան թարգմանութիւնը և նրա հետևողութեամբ կազմած Գր. Մազիստրոսի, Յովհ. Ե. Ղընկացու և այլն քերականութիւնները):

Յունահռոմէական քերականութիւնը հիմք է ծառայում դպրոցական քերականութեան նոյն իսկ մինչև մեր օրերը. արդի դպրոցական քերականութիւնը դեռ չէ իւրացրել լեզուաբանական սկզբունքները և վխտում է բազմաթիւ սխալներով և թիւրիմացութիւններով, որոնք յատուկ են յունահռոմէական քերականութեան:

Յունահռոմէական քերականութիւնն անհամեմատ ցածր է հնդկականից, բայց յոյները, մանաւանդ հռոմայեցիք շատ աւելի մանրամասն ուսումնասիրել են շարահիւսութիւնը, որ խիստ պակասաւոր է հնդկիկների մօտ: Հնդկական քերականութեան այս պակասութիւնը բացատրւում է նրանով, որ սովորական շարահիւսական կանոնների տեղ սանսկրիտում նկատւում է մի երևոյթ — բառերի միացումն, որի ժամանակ գործում են հետաքրքիր ֆոնետիքական օրէնքներ:

Յոյները լեզուի համեմատական ուսմունքի մասին մտածել անգամ չէին կարող, որովհետև նրանց հասկացողութեամբ չէին կարող համեմատութեան մէջ զբաղել յունարէնի հետ «բարբարոսների» լեզուները: Շնորհիւ այդ բանի յոյների ուշադրութիւնից վրիպել են և այդպիսով անհետ կորել գիտութեան համար մի շարք յունարէնին ազգակից լեզուների, ինչպէս օր. փոխգերէնը, թրակերէնը, իլլիրերէնը, հնդեւրոպական հայերէնը և այլն:

Լեզուի համեմատութեան գաղափարը ծագում է ս. Գրքի ազգեցութեան տակ, բայց նոյն ս. Գրքի շնորհիւ ընդունւում է սխալ սկզնունք, իբր թէ բոլոր լեզուները առաջացել են եբրայեցերէնից:

Որքան աւելի ենք մօտենում 19-րդ դարին, այնքան աւելի ամրապնդւում է լեզուի համեմատական ուսումնասիրութեան գաղափարը: Այսպէս 18-րդ դարում Լայբնիցի տուած ցունցմունքներով կազմում են բառարաններ համառօտ բնագիրներով, որոնք պարունակում էին նիւթ զա-

նազան լեզուներից, ի հարկէ առանց որ և է սխտեմի: Նոյն
 Լայրնից առաջարկում է Պետրոս Մեծին հաւաքել այդ-
 պիսի նիւթ նաև Ռուսաստանի ժողովրդների լեզուներից:
 Յայտնի է եկատերինա Բ.-ի ժամանակ Ռուսաստանում
 հրատարակուած (1787 թ.) Сравнительные словари всехъ
 языковъ и нарѣчій և այլն:

Սակայն համեմատական լեզուաբանութիւնը հետեանք
 է այն ընդհանուր գիտական ըմբռնումների, որոնք սկիզբ
 ստանալով 18-րդ դարի վերջում՝ խո, արմատներ են ձգում
 19-րդ դարում: այն է, որ գիտութեան զանազան ճիւղե-
 րում բազմաթիւ բարդ երեւոյթներ պէտք է բացատրուեն
 պատմական զարգացմամբ: Լեզուաբանութեան մէջ այդ
 երեւոյթը նկատելու համար անհրաժեշտ էր ազգակից լե-
 զուների համեմատութիւնը և այս կողմից վճռական նշա-
 նակութիւն է ունենում Եւրոպայի գիտնականների սանս-
 կրիտի հետ ծանօթանալը, որ սկսւում է 16-րդ դարից:

Անգլիացի Զոնս, որ Բենգալում դատաւոր էր, 1776 թ.
 յայտարարեց, որ սանսկրիտը, յունարէնը և լատիներէնը,
 թերևս նաև գոթերէնն ու կելտերէնը ազգակից լեզուներ
 են և առաջացել են մի ընդհանուր լեզուից, որ այժմ գուցէ
 գոյութիւն չունի այլևս:

1808 թ. լոյս տեսաւ Փր. Շլեգելի Ueber die Sprache und
 Weisheit der Indier (Հնդիկների լեզուի և իմաստութեան
 մասին) գիրքը, որտեղ յայտնի սանսկրիտոլոգը այն սխալ
 միտքն էր պաշտպանում, որ իբր թէ յունարէն, լատինե-
 րէն, պարսկերէն և այլն լեզուները ծագել են սանսկրիտից,
 որն այդպիսով յայտարարւում էր որպէս մայր լեզու (Այդ
 կարծիքը նոյն իսկ մինչև այժմ վերջնականապէս չէ ան-
 հետացել և յաճախ լսւում է ոչ մասնագէտների շրջանում):

Այդ սխալ կարծիքը փարատուեց 1816 թ., երբ Փրանց
 Բուպլ (1791—1867) հրատարակեց սանսկրիտի համեմա-
 տական խոնարհման մասին իւր կատարած մեծարժէք ու-
 սումնասիրութիւնը (Ueber das Conjugationssystem der San-
 skritsprache in Vergleichung mit jenem der griechischen, la-
 teinischen, persischen und germanischen Sprache): Այս գիրքը

վերջնականապէս հաստատեց, որ սանսկրիտը, յունարէնը, լատիններէնը, պարսկերէնը և գերմաններէնը ցեղակից լեզուներ են և ծագել են մի ընդհանուր մայր լեզուից: Նրանց ցեղակցութիւնը Բոպպ հաստատում է ոչ թէ բառերի նմանութեամբ, այլ ամբողջ քերականական կազմի: Այդպիսով 1816 թուականը պէտք է համարել լեզուաբանութեան սկիզբը:

Բոպպը 1833 թ. հրատարակեց նաև իւր հռչակաւոր Համեմատական քերականութիւնը (Vergleichende Grammatik des Sanskrit, Zend, Griechischen, Lateinischen, Littauischen, Gothischen und Deutschen): 1856—61 թ. այդ գիրքը լոյս տեսաւ Բ. տպագրութեամբ և յիշեալ լեզուներին աւելացաւ նաև հայերէնը (հին սլաւոներէնը տեղ էր դրել դեռ տառջին տպագրութեան ընթացքում Բ. պրակից սկսած): Սա աւելի հոյակապ գործ էր և ընդգրկում էր բոլոր յայտնի հնդեւրոպական լեզուների ու ձևերի պատմութիւնը:

Բոպպը վախճանուեց 1867 թ., իսկ նրա համեմատական քերականութիւնը լոյս տեսաւ Գ. տպագրութեամբ 1868—71 թ.:

Բոպպի նշանակութիւնը լեզուաբանութեան համար հսկայական է: Բացի այն, որ նա հիմք դրեց այդ հոյակապ գիտութեան, այլ և նա ընդհանուր առմամբ գծեց այն ճանապարհը, որով պիտի ընթանար գիտական միտքը այդ ուղղութեամբ: Լեզուների համեմատութիւնից զատ Բոպպի բերած գլխաւոր նորութիւնը կայանում էր նրանում, որ նա մնում է իրականութեան, փաստերի սահմանում և ոչ թէ ապաւինում է ընդհանուր խորհրդածութիւնների*):

Բոպպին գլխաւոր հիմք ծառայում է սանսկրիտը. իսկ այդ շատ կտրեւոր էր, եթէ ի նկատի ունենանք, որ սանսկրիտն այն լեզուն է, որտեղ ամենից շատ և աւելի հարազատ կերպով պահուած են նախալեզուի ձևեր և երեւոյթներ. բացի դրանից սանսկրիտն ուսումնասիրուած էր

*) Այդ, ի հարկէ, ընդհանուր առմամբ: Սակայն ձևերի ծագման մասին Բոպպի առաջ բերած խորհրդածութիւնները կրում են նրա նախորդ շրջանի անմիջական ազդեցութիւնը:

աւելի կատարեալ ձևերով, որ մեծ նորութիւն էր եւրոպական գիտութեան համար: Բայց Բոպպը վարպետութեամբ օգտուում է նաև միւս հնդեւրոպական լեզուներից և հնարաւորութիւն է ստանում ստեղծելու հնդեւրոպական լեզուների համեմատական քերականութիւնը:

Դեռ Conjugationssystem-ում ապացուցել էր Բոպպ ընտրած լեզուների ազգակցութիւնը, նրանց մի ընդհանուր նախալեզուից ծագած լինելը և բայական զանազան ձևերի նոյնութիւնն այդ լեզուներում: «Համեմատական քերականութեան» մէջ այդ և այլ գիտական խնդիրներ մշակւում են աւելի խոր և բազմակողմանի կերպով և Բոպպ թողնում է իւր յետնորդներին մի արդէն հաստատուն և անսասան գիտական շէնք:

Սակայն այդ շէնքը, թէպէտ և արդիւնք հանճարեղ մտքի, ունէր մի քանի խոշոր պակասութիւններ: Այստեղ բոլորովին անուշադիր են թողած լեզուաբանութեան հիմնաքարը—հնչիւնաբանութիւնը, նոյնպէս և ձևերի գործածութիւնը և խօսքի (նախադասութեան) կազմութիւնը: Այս հարցերի մանրամասն ուսումնասիրութիւնը բաժին մնաց ապագային:

Բոպպի հետ միաժամանակ լեզուի գիտական ուսումնասիրութեամբ զբաղւում են նաև այլ երկու գերմանացի տիանաւոր գիտնականներ, որոնք կարող են բաժանել Բոպպի հետ լեզուաբանութեան հիմնադրի պատիւը: Դրանք են Վիլհելմ Հումբոլտ և Յակոբ Գրիմմ: Սակայն պէտք է յիշել Դանիացի գիտնական Ռասկին, որ Բոպպից բոլորովին անկախ և նրանից դեռ առաջ (1814 թ.) եկել էր նման եզրակացութեան, ինչպէս և Բոպպ, համեմատելով գերման լեզուները յունարէնի, լատիներէնի և բալ ռաւառնական լեզուների հետ: Սակայն Ռասկի աշխատութիւնը ոյս տեսակ միայն 1818 թուին, բացի դրանից նա շատ կոպմերով պակասաւոր էր, քան Բոպպի ուսումնասիրութիւնը:

Յակոբ Գրիմմ (1785—1863) հիւք գրեց պատմական քերականութեան, հրատարակելով 1819 թ. իւր գերմաներէնի քերականութեան Ա. հատորը, որի Բ. տպագրու-

թիւնը (1822 թ.) պարունակում է գերման լեզուների հնչիւնների պատմութիւնը, հիմնուած գրաւոր յիշատակարանների ցուցմունքների վրայ, սկսած հնագոյն ժամանակներից (Գ—Դ. դար): Այս աշխատութիւնից պարզ երևում է, որ բառի հնչիւնական կողմը ենթակայ է մշտական փոփոխութեան և այդտեղ կարելի է նոյն իսկ օրէնքներ ցոյց տալ, որի փառաւոր օրինակը—գերմանական հնչիւնափոխութեան յայտնի օրէնքն է (Lautverschiebung), որ և ձևակերպեց Յ. Գրիմմ:

Մինչդեռ Բոպպը հիմք դրեց համեմատական քերականութեան, իսկ Յ. Գրիմմ հաստատեց լեզուի պատմական զարգացման փաստը, երրորդ ականաւոր գիտնականը—Վիլհելմ Հումբոլտ (1765—1835) լեզուաբանութիւնը դրեց հոգեբանական հողի վրայ: Խիստ նշանակալից է Հումբոլտի որոշումը, որի համաձայն լեզուն ոչ թէ գործիք է (օրգոն), այլ մարդկային հոգու արտայայտութիւն (ἐνέργεια): Հետեւաբար լեզուական բազմաթիւ երևոյթներ միաժամանակ նաև հոգեբանական երևոյթներ են և նրանց բացատրութիւնը պէտք է որոնել այն գիտութեան մէջ, որ զբաղւում է հոգեկան արտայայտութիւնների ուսումնասիրութեամբ: Հումբոլտի գլխաւոր աշխատութիւնն այդ մասին կապի լեզուի ուսումնասիրութեան յառաջաբանում տալով բերած խորհրդածութիւնն է («Մարդկային լեզուների կազմի տարբերութիւնը և նրա ազդեցութիւնը մարդկութեան հոգեկան զարգացման վրայ»), որ լոյս տեսաւ նրա մահից յետոյ 1836 թ.):

Լեզուաբանութեան հիմնադիրների անուան հետ կապուած է մի այլ տաղանդաւոր գիտնականի—Աւգուստ Ֆրիդրիխ Պոտտի անունը: Բոպպը և Գրիմմը ցոյց էին տուել բազմաթիւ ձևեր, որոնք իրար ազդակից էին զանազան լեզուներում: Գրիմմ նոյն իսկ հնչիւնափոխութեան օրէնքն

*) Հումբոլտի սկսած գործը շարունակեցին Շալմպալ և Լացառուս, իսկ լեզուի հոգեբանական ուսումնասիրութիւնը վերջերս հասաւ իւր բարձրագոյն կէտին Վունդի հոշակաւոր Völkerpsychologie գրքում:

էր դառել (այդ օրէնքը—Lautverschiebung—անկախ Գրիմմից և նոյն իսկ աւելի առաջ դառել էր Դանիացի Ռասկ), սակայն գեո չըկային ստուգաբանութիւններ, որոնք հիմնուած լինէին հնչիւնաբանական օրէնքների վրայ և ցոյց տային, թէ ինչ բառ կամ ինչ ձև ինչ կերպարանք է ունեցել նախալեզուում և ինչ օրէնքներով ու ինչպիսի փոփոխութիւններ է կրել զանազան հնդեւրոպական լեզուներում: Համեմատական հնչիւնաբանութեան վրայ հիմնուած Ստուգաբանութեան հիմքը գնում է Պոտտ 1833 թ., երբ նա սկսում է հրատարակել իւր «Ստուգաբանական հետազոտութիւնները» (Etymologische Forschungen):

Յիշեալ նշանաւոր գերմանացի գիտնականների զործունէութիւնը կազմում է լեզուաբանութեան պատմութեան առաջին շրջանը: Այդ շրջանում արդէն կառուցւում է գիտական շէնքի բոլոր հիմնական մասերը և հետեւեալ սերնդին մնում է միայն ամրապնդել այդ հիմունքները նորանոր մանրակրկիտ ուսումնասիրութիւններով: Այդ ուսումնասիրութիւնները վերաբերում են զանազան յայտնի և անյայտ հնդեւրոպական լեզուների, ինչպէս են իրաներէնը, գերմաներէնը, հայերէնը, լիթուերէնը, կելտերէնը, սլաւոներէնը և այլն:

Նշանակալից է այն հանգամանքը, որ դասական բանասիրութեան ներկայացուցիչները հէնց սկզբից թշնամական վերաբերմունք ցոյց տուին դէպի համեմատական լեզուաբանութիւնը: Այդ դարաւոր աւանդական գիտութիւնը չէր կարող հաշտուել նորեւուկ գիտութեան—լեզուաբանութեան յանդուգն եզրակացութիւնների հետ, որոնք տարածւում էին բացի այլ լեզուներից նոյն իսկ յունարէնի և լատիներէնի վրայ: Սակայն մի կողմից կլասսիկ ֆիլոլոգների ձեռքով կատարած բազմաթիւ ուսումնասիրութիւններ, որոնք թէպէտ և զուրկ էին լեզուաբանական հիմքերից, բայց իրենց մէջ պարունակած արժէքաւոր նիւթով մեծապէս նպաստեցին լեզուաբանութեան առաջադիմելուն, իսկ միւս կողմից զանուեցին նաև նշանաւոր կլասսիկներ, ինչպէս Կուրցիուս և Կորսէն, որոնք իւրացնելով

լեզուաբանութեան սկզբունքները, կատարեցին մի շարք կարևոր ուսումնասիրութիւններ և իրենց ազդեցութեամբ միանգամայն յեղաշրջեցին կլասիկների աւանդական հայեացքներն և վերաբերմունքը դէպի լեզուաբանութիւնը: Դրա համար հոգ պատրաստուել էր արդէն դասական լեզուների բարբառների ուսումնասիրութեամբ, որի համար գիտութիւնը պարտական է նախ և առաջ Արէնսին:

Կորցիուսի գրուածքները վերաբերում են յունարէնին, որի ուսումնասիրութեան մէջ բռնում են պատուաւոր տեղ (գլխաւոր ուսումնասիրութիւնն է Grundzüge der griechischen Etymologie—Յունական ստուգաբանութեան հիմունքները): Ինչ նշանակութիւն ունի յունարէնի համար Կուրցիուս, համարեա նոյն նշանակութիւնը լատիներէնի համար ունի Կորսէն:

Լեզուաբանութեան պատմութեան այս Բ. շրջանի առաջնակարգ ներկայացուցիչն է:

Աւգուստ Շլայխեր (1821—1868): Այս հոյակապ գիտնականը լիովին իւրացրել էր իւր նախորդներ ի ստեղծած նոր գիտութիւնը, բայց միաժամանակ նաև բնական գիտութիւնների մեթոդը, որ նա աշխատում է կիրառել լեզուաբանութեան մէջ, ուստի և հետամուտ է լինում սահմանելու երիտասարդ գիտութեան օրէնքները:

Դեռ 1848 թ. գրած նրա «Համեմատական—լեզուաբանական ուսումնասիրութիւնները» կրում են այդ բնաւորութիւնը: Շլայխերի աւելի նշանաւոր ուսումնասիրութիւնն է լիթուերէնի քերականութիւնը, որի լոյս տեսնելը (1856 թ.) դարազրուի է կազմում լեզուաբանութեան պատմութեան մէջ: Այստեղ արդէն հնչիւնաբանութիւնը իւր պատշաճ տեղն է գրաւում քերականութեան միւս բաժինների—ձևաբանութեան և համաձայնութեան կողքին և բացի դրանից հիմնւում է կենդանի լեզուի արտասանութեան, և ոչ թէ մեռած տառերի վրայ: Այս մի խոշոր նորութիւն էր և այս գեղեցիկ աշխատութիւնը մինչև այժմ էլ չը հնանալուց զատ համարւում է օրինակելի լեզուաբանական ուսումնասիրութիւն:

Սակայն Շլայխերի և միաժամանակ նաև ամբողջ երկրորդ շրջանի լեզուաբանութեան գլուխ գործոյն է *Compendium der vergleichenden Grammatik der indogermanischen Sprachen* (Համառօտութիւն Հնդեւրոպական լեզուների համեմատական քերականութեան) 1861 թ.: Այս երկասիրութեան գլխաւոր նորութիւնն է Հնդեւրոպական նախալեզուի իդէան, որ Շլայխեր հիմնաւորում էր իւր բնագիտական տեսութեամբ, ընդունելով, որ Հնդեւրոպական գիՖֆերենցիացիայի ենթարկուած և զարգացման որոշ շրջաններ անցած լեզուները պէտք է ունենային և իրենց հնագոյն նախատիպը, որի կազմի և մանրամասնութիւնների որոշելը Շլայխեր համարում էր իւր ուսումնասիրութեան գլխաւոր նպատակը:

Այս գրքում ևս ծանրութեան կենտրոնը հնչիւնաբանութիւնն է, իսկ ուսումնասիրութիւնն ընդհանրապէս կրում է ոչ թէ պատահական և թուուցիկ բնաւորութիւն, այլ հիմնաւոր և սիստեմատիկ: Ի հարկէ, Շլայխեր գտնուում էր բոլորովին այլ պայմանների մէջ իւր *Compendium*-ը գրելիս, քան Բոպպը: Նա ունէր արդէն հաստատուն պատուանդան — իւր նախորդների կառուցած շէնքը, որի վրայ հիմնուելով և շնորհիւ իւր զօրեղ տաղանդին նա շօշափում և լուծում է մի շարք կարդինալ հարցեր, որով և զգալի կերպով առաջ է մղում լեզուի գիտական ուսումնասիրութիւնը:

Սակայն Շլայխեր ևս ազատ չէր թերութիւններից: Դրանցից գլխաւորն անշուշտ նրա լեզուի մասին ունեցած թիւր կարծիքն էր, որ սակայն ժառանգութիւն էր մնացել նրան նախորդ շրջանից և որի համաձայն լեզուի զարգացումը միևնոյն ժամանակ և նրա անկումն ու քայքայումն է:

Բ. շրջանում բազմաթիւ գիտնականներ կարծես համախմբուած էին Շլայխերի շուրջը և ձգտում էին ընդհանուր ուժերով մի վերջնական նպատակի: Նրանցից կարեւոր է յիշել Վիեննայի պրոֆ. Միկլոշիչին (1813—91), որ սլաւոնագիտութեան գլխաւոր ներկայացուցիչն էր, Մաքս Միլլերին, Բենֆէյին, Բէօթլինկին և Ռոթին, որոնք առաջ մղեցին սանսկրիտի ու վեդերէնի ուսումնասիրութիւնը,

Շախգելին և Իւստին, որոնք զբաղւում են Աւեստայի լեզուով, Յէյսին-կելտերէնի գիտական ու ուսումնասիրութեան հիմնադրին և վերջապէս Ֆիլքին, որի հնդերոպական լեզուների համեմատական ստուգաբանական բառարանը (արտագր. 1868 թ.), որտեղ շարունակ բերւում են ազգակից բառերի նախահնդերոպական ձևերը և այդպիսով աւելի է ամրապնդւում Նլայխերի զարգացրած նախալեզուի տեսութիւնը, մինչև այժմ էլ համարւում է ամենակարևոր լեզուաբանական ուսումնասիրութիւնն է ից մէկը:

Ուշադրութեան արժանի է, որ Բ. շրջանի վերջերից սկսած լեզու արանութիւն, որ մինչ այդ համա եւ մեծաշնորհ էր գերմանական գիտնականների, սկսում է դուրս գալ գերման աշխարհից և մուտք է դրւում նաև Թրանսիա և այլ երկրներ:

Լեզուաբանութեան այս շրջանում սկսւում և խոշոր ծաւալ է ընդունում նաև հայերէնի գիտական ուսումնասիրութիւնը եւրոպացի գիտնականների ձեռքով, որի վրայ մենք կանգ կառնենք մի փոքր և ելի մտերամասն:

Հայերէնի գիտական ուսումնասիրութեան հիմնադիր կարելի է համարել Բոպպի աշակերտ Յուլիոս Պետերմանին (1801 - 1876). Պետերմանը սեմագէտ էր. հայերէնով նա զբաղուել է վենետիկո մ Մխիթարեանների մօտ, որտեղ նա աշակերտել է հ. եզուարդ Հիւրմիւզին: 1830 թ. Պետերման շշանակո եց Բեռլինի համալսարանի ուսուցչապետ և նոյն թուին հրատարակեց իւր *Grammatica linguae armeniacae* (հայերէնի քերականութիւնը), որտեղ նա ներկայացնում է գրաբարի քերականութիւնը և կցում նմոյշներ և գնդիկ Կողբացուց լատիներէն թարգմանութեամբ և բառարանով: Այս գիրքը Պետերմանի առաջին և գլխաւոր աշխատութիւնն է հայերէնի վերաբերեալ, այստեղ նա այն միտքն է յայտնում, որ հայերէնը պատկանում է հնդեւրոպական լեզուների թւին:

1841 թ. Պետերման հատա ակեց իւր քերականութեան համառօտութիւնը (*Brevis linguae armeniacae grammatica* - հայերէնի համառօտ քերականութիւն), իսկ 1872 թ.

սրա Բ. տպադրութիւնը բարեփոխուած ձևով և յաւելուածներով:

Պետերմանի քերականութիւնն ընդհանրապէս լաւ ընդունելութիւն գտաւ և Լ. Դիֆենբախ գրեց նպաստաւոր քննադատութիւն 1843 թ. (Diefenbach — Ueber Petermanns Grammatik — Jahrb. für wissenschaft. Kritik, Berl 1843, B. II):

Բացի գրաբարի քերականութիւնից Պետերմանը զբաղուել է հայ բարբառների ուսումնասիրութեամբ (Ազուլիսի, Թիֆլիզի) և գրել է բազմաթիւ բանասիրական յօդուածներ հայադիտութեան վերաբերեալ (Մ. Խորենացու մասին, հայկական երաժշտութեան, Եւսեբիոսի հայերէն թարգմանութեան մասին, Քննադատական Այտնեանի քերականութեան ևայլն):

1846 թ. լոյս տեսաւ Բաւարիայի գիտութեանց ճեմարանի ժողովածուների մէջ հայերէնի վերաբերեալ մի այլ ուսումնասիրութիւն — Die Grundlagen des Armenischen im arischen Sprachstamme (հայերէնի տեղը արիական լեզուների մէջ), որի հեղինակն էր Փրիլդր. Վինդիշման (1811 — 1861): Այս գիրքը գրուած էր դեռ տաս տարի առաջ և հեղինակը Պետերմանից անկախ նոյն եզրակացութեան էր եկել հայերէնի մասին, այն է — որ հայերէնը հնդեւրոպական լեզու է:

Բոլալը, որ իւր համեմատական քերականութեան առաջին տպագրութեան մէջ (1833-ից սկսած) տեղ չէր տուել հայերէնին, այս ուսումնասիրութիւններից յետոյ զբաղուեց հայերէնով և իւր քերականութեան Բ. հրատարակութեամբ (1856—61 թ.) ներս առաւ նաև հայերէնը հնդեւրոպական ընտանիքի մէջ, որտեղ արդէն տեղ էին գտել միւս բոլոր յայտնի հնդեւրոպական լեզուները:

Ժամանակակից միւս հայագէտների թւում (Դոշէ, Շպիգել, Իւստի) առանձնապէս աչքի են ընկնում Փր. Միւլլերը, Պ. Դը Լազարը և Հ. Հիւբշման:

Պաուլ Դը-Լազարը (ծն. 1827) Գէօթինգենի համալսարանի պոօֆեսսոր էր, յայտնի իւր բազմակողմանի զարգացմամբ: Նրա անդրանիկ աշխատութիւնը հայերէնի մա-

սին հայերէնի բաղաձայների համեմատութիւնն է սանսկրիտի հետ (Vergleichung der armenischen Consonanten mit denen des Sanskrit, 1850 — Zeitschr. der morgenländischen Gesellschaft, Bd. II). հետեւեալ թւին (1851) լոյս տեսաւ նրա Arica (աւելի քան 450 բառերի վերլուծութեամբ), իսկ 1854 — Zur Urgeschichte der Armenier (մօտ 1000 բառերի վերլուծութիւն): Իւր մի այլ հետազօտութեան մէջ (Gesammelte Abhandlungen, 1866 թ.) նա քննում է մի շարք բառեր, խօսում է հայերի ցեղակցութեան մասին փոխաբացոց և թրակացոց հետ և ընդունելով հայերէնի մէջ երեք շերտ, որոշում է հնագոյնի — հիմնական շերտի — տեղը հնդեւրոպական ընտանիքում:

Դը Լագարդի վերջին կարեւոր աշխատութիւնն է հայերէնի մասին Armenische Studien (Հայկական ուսումնասիրութիւններ, 1877 թ.), որտեղ նա զբաղւում է հայերէն 2413 բառերի վերլուծութեամբ և ամփոփում իւր կարծիքները, այն է — հայերէնը երեք շերտ ունի՝ Հայկական, Արշակունեան (Պահլաւի), և Սասանեան. — «Հայկականը» իրանական լեզու է, բայց և գտնւում է իրանականի, յունականի և կիմրականի, այլ և լիթուականի ու սլաւոնականի միջին տեղում:

Փր. Միլլեր (Տն. 1834 թ.) Վիեննայի համալսարանի լեզուաբանութեան ուսուցչապետ և գիտութեանց ճեմարանի անդամ, յայտնի իւր մի քանի խոշոր լեզուաբանական երկերով (Grundriss der Sprachwissenschaft, Allgemeine Ethnographie և այլն):

Հայերէնի մասին նա ունի մի շարք ուսումնասիրութիւններ, զլիաւորապէս գիտութեանց ճեմարանի բիւլլետէնների մէջ, որտեղ նա նման եզրակացութիւնների է յանգում, ինչպէս և Դը Լագարդ, այսինքն, որ հայերէնը մերձաւոր ազգակցութեան մէջ է գտնւում հնդեւրոպական լեզուախմբի իրանական ճիւղի հետ:

Այդ ուսումնասիրութիւններից կարեւորներն են. — Հայերէնի քերականութեան մասին մի քանի յօդուածներ (1861 — 65 թ.), որոնք վերաբերում են ֆոնետիկային, հո-

լովման, խոնարհման, բառակազմութեան և ստուգաբանութեան:

Armeniaca (1865, 1870 և շար.)—մի շարք բառերի ստուգաբանութիւն և հայերէն ու վրացերէն դրութեան մասին, բառերի վերջաւորութեան, շէշտի և փոխառութիւնների մասին:

Վերջապէս 1877 թ. լոյս տեսաւ Յր. Միւլլերի Ueber die Stellung des Armenischen im Kreise der indogermanischen Sprachen (հայերէնի տեղի մասին հնդեւրոպական լեզուների շրջանում), որ նա գրել է որպէս պատասխան Հիւրշմանի համանուն յօդուածի և որտեղ նա նոյն կարծիքն է յայտնում, ինչ որ Գր. Լազարդ, այն է, որ հայերէնը իրանական ճիւղին է պատկանում:

Յր. Միւլլեր ունի նոյնպէս մի շարք յօդուածներ Wiener Zeitschrift für die Kunde des Morgenlandes-ի մէջ հայկական բանասիրութեան նուիրուած, ինչպէս օր. Առ. Դաւրիթեցուն, Միս. Գօշի մասին և այլն:

Լեզուաբանութեան պատմութեան Գ. և աւելի բեղմնաւոր շրջանն սկսում է 70-ական թուականներից: Տեղի է ունենում մտքերի մեծ յեղաշրջում, որի մէջ կարեւոր դեր է կատարում աւելի երիտասարդ հնդեւրոպական լեզուների (գերմանական, ռոմանական, սլաւոնական) ուսումնասիրութիւնը: Կորուզողութիւնն սկսում է հնի (Նլայխեր) քրննադատութեամբ և մերժմամբ, որի տեղ շուտով կառուցւում է նորը, հիմնուած աւելի ամուր և յուսալի գիտական հիմքերի վրայ: Գ. շրջանի զխաւոր ուղղութիւնը կոչւում է երիտասարդ քերականների (Junggrammatiker) ուղղութիւն:

Դեռ նոր շրջանի նախօրեակին, 1863 թ. մաթեմատիկոս Գրասման իւր մի գիւտով սկիզբ դրեց այն գիտական համոզման, որի համաձայն երեւոյթները լեզուի մէջ կատարւում են խիստ օրինաչափութեամբ և բացառութիւնները բացատրւում են նոյնպէս որոշ օրէնքներով: Յայտնի է, որ հնդեւրոպական այլ լեզուների մ հնչիւնին զօթերէնում (և հայերէնում) համապատասխանում է t. սակայն

գոթերէն *dauhtar* (հայերէն *dustr*) և այլն բառերում ապաստած *t*-ի փոխարէն գտնուում ենք *d*, ինչպէս և սանսկրիտում: Հին օրաւոններէնում: Բացատրուում է այս բառերէնյթին անկանոնութիւնը կամ՝ բացառութիւնը բառ Գրասմանի հետեւեալ ձևով: Նախալեզուում գոյութիւն ունէր և թաւ հնչիւն *dh*, որի համապատասխան հնչիւնն է գոթերէնում (և հայերէնում) ոչ թէ *t*, այլ *d*, իսկ սանսկրիտում նոյնպէս *d*՝ ամեն անգամ: Երբ նոյն կամ յաջորդ վանկի մէջ գտնուում է այլ թաւ հնչիւն, ինչպէս այս դէպքում:

Աւելի կարևոր էր Դանիացի երիտասարդ գիտնական Վերների գիւտը (1877 թ.), որով բացատրուեց այն տարօրինակ երէնյթը. որ հնդկերոպական *p*, *t*, *k* խուլ հնչիւններին գերման լեզուներում համապատասխանում են երբեմն խուլ և երբեմն հնչիւն (թրթռուն) շփականները: Վերների օրէնքով պարզուեց, որ պատճառը նախորդ ձայնաւորի շեշտած կամ անշեշտ լինելն է:

Աւելի ևս կարևոր էր Շլայխերի ձայնաւորների սխտեմի քննադատութիւնը: Սա ընդունում էր հնդկերոպական նախալեզուում երեք ձայնաւորներ—*a*, *i*, *u*. Շնորհիւ մի շարք առաջնակարգ գիտնականների (Կուլըրիուս, Յովհ. Շմիդտ, Ամելունգ, Բուուզման, Դը Սոսսիւր) երկարատեւ հետազօտութիւնների պարզուեց, որ այդ ենթադրութիւնը միանգամայն անհիմն է և այդպիսով ոչնչացաւ հնդկաիրանական լեզուների հմայքը, որոնց ազդեցութեան տակ առաջացել էր այդ ենթադրութիւնը:

Խիստ կարևոր էին Ասկոլիի կրկնակի բաղաձայնների և Բուուզմանի, Դը Սոսսիւրի ու Հիւբշմանի ձայնաւորների սխտեմի և մի շարք այլ գիւտեր, որոնք բոլորը կոչուած էին ամրապնդելու այն հռչակաւոր դեկլար, որ լեզուաբանութիւնն ընդունել էր դեռ 1876 թ. Լիսկինի յայտարարութեամբ, թէ հնչիւնական օրէնքները բացառութիւն թոյլ չեն տալիս, իսկ մեզ թուացող բացառութիւնները բացատրուում են այլ օրէնքներով:

Հնչիւնաբանական օրէնքների անխախտութիւնը մե-

ծապէս նպատեց և անալոգիայի օրէնքի հիմնաւորուելուն և ընդհանրանալուն: Բազմաթիւ ֆոնետիքական բացառութիւններ, որոնք հնչիւնական օրէնքների տակ չէին մտնում, սկսեցին բացատրուել անալոգիայի օրէնքով և երիտասարդ քերականների խոշորագոյն ներկայացուցիչները — Օստրոֆ, Բոուզման և Պատու բազմաթիւ օրինակներով և հոգեբանական տուեալներով ամրապնդեցին նորագիւտ նշանաւոր լեզուաբանական օրէնքը:

Գ. շրջանի բերած նորութիւնը միայն հնչիւնական օրէնքների*) օրինաչափութիւնն և անալոգիան չէր: Այս շրջանում նկատի առնուեցին այն բազմաթիւ բարդ պայմանները, որոնց մէջ ապրում և զարգանում է լեզուն, ի միջի այլոց հարեան լեզուների ազդեցութիւնը: Վերջին հարցին նուիրուած ուսումնասիրութիւններից կարեւորագոյնը պատկանում է Շտրասբուրգի գիտնական Հայնր. Հիւբշմանին և վերաբերում է հայերէնին:

1875 թ., երբ դեռ Միւլլերի և Դը Լաֆարդի ազդեցութեան տակ հայերէնը իրանական լեզու էր համարւում, Հիւբշման, որ նոյնպէս այդ կարծիքի հետեւող էր, տպագրեց մի ուսումնասիրութիւն Ueber die Stellung des Armenischen im Kreise der indogermanischen Sprachen (Kuhns Zeitschrift für vergleichende Sprachforschung 23, 5—42), որտեղ նա հերքում է այդ ընդունուած կարծիքը: Հիւբշման զատում է այստեղ փոխ առած բառերը բուն հայերէն բառերից, կազմում է հայերէնի գլխաւոր հնչիւնաբանական օրէնքները և ընդունելով հայերէնը անկախ ճիւղ հնդեւրոպական ընտանիքի, գնում է նրան իրանականի և սլաւո-լիթուական ճիւղերի միջև: Այս յօդուածի պատասխանն էր Փր. Միւլլերի համանուն յօդուածը և Դը Լաֆարդի Armenische Studien 1877 թ.:

*) Հնչիւնաբանութիւնը որպէս առանձին լեզուաբանական դիսցիպլին առաջ մղուեց դարձեալ նոր շրջանում շնորհիւ Լայպցիգի համալսարանի պոֆեսսոր Սիվերսի, որի Grundzüge der Phonetik (ա. տպագր. 1876 թ.) իւր տեսակի մէջ ամենակատարեալ գործն է:

Աւելի հաստատ ապացոյցներով հիմնաւորեց Հիւրշման հայերէնի անկախ հնդեւրոպական լեզու լինելու հարցը 1883թ. Armenische Studien գրքում, որտեղ նա առաջարկում է բուն հայերէնի բոլոր յայտնի բառերի (թւով 232) ստուգաբանութիւնը: Այդ ստուգաբանութիւնների վրայ է կառուցել Հիւրշման հայերէնի ֆոնետիկան և կցել մի քանի տեղեկութիւններ ձևաբանութիւնից և վերջնականապէս ապացուցել, որ հայերէնը իրանական լեզու չէ և մինչև այդ ժամանակ եղած կարծիքը հիմնուած է եղել այն սխալ տեսակէտի վրայ, որի համաձայն իրաներէնից փոխառած բազմաթիւ բառեր հայերէնում համարուել են բուն հայկական բառեր:

Հիւրշմանի հայագիտական ուսումնասիրութիւնների զլուխ գործոցն Armenische Grammatik, I Theil, Etymologie երկու պրակ (Լայպցիգ 1895—97): Դիւրքը բաժանուած է մի քանի բաժինների և պարունակում է ինչպէս բուն հայերէն բառերի (թւով 438), այնպէս և փոխառած բառերի ստուգաբանութիւնները: Վերջիններիս մէջ գտնուում ենք բազմաթիւ պարսկերէն անուններ (217) և բառեր (686), նոր պարսկերէն և արաբերէն բառեր (171), ասորերէն անուններ (52), ասորերէն բառեր (133), յունարէն անուններ, յունարէն բառեր (512), ֆրանսերէն բառեր և մի շարք անորոշ աղբիւրից փոխ առած բառեր:

Հիւրշմանի նշանակութիւնը շատ մեծ է հայագիտութեան համար. նա ոչ միայն հիմնաւորեց յիշեալ ուղիղ տեսակէտը հայերէնի վերաբերմամբ, այլ և տուեց մի շարք հիմնաւոր ուսումնասիրութիւններ, որոնց թւին պատկանում են ինչպէս վերոյիշեալները, այնպէս և մի քանի ուրիշները, մանաւանդ տառադարձութեան վերաբերմամբ: Հիւրշմանի սահմանած տառադարձութիւնը (տրանսկրիպցիան) — Die Umschreibung der iranischen Sprachen und des Armenischen (Լայպցիգ 1882) — կատաղի յարձակման ենթարկուեց Դը Լագարդի կողմից, բայց արժանացաւ Բարթոլոմէի հեղինակաւոր պաշտպանութեան և չնչին փոփոխութիւններով ընդունելի դարձաւ և գործ է ածուում արեւմտեան գիտութեան մէջ մինչև այժմ:

Հիւրշմանի Armenische Studien դարաշուիս կազմեց
 Հայագիտութեան պատմութեան մէջ: Դրանից յետոյ բազմաթիւ եւրոպացի գիտնականներ, սեննալով արդէն ուղիղ
 հիմնական տեսակէտ հայերէնի վերաբերմամբ, սկսեցին մի
 շարք մասնագիտական ուսումնասիրութիւններ, որոնցով
 աւելի խորացրին հայ լեզուաբանութիւնը: Այդ գիտնա-
 կաններից նշանաւորագոյններն են Բարթոլոմէ, Մէյէ, Քարստ
 և Պեդերսըն: Յիշատակելու արժանի են այդ և մի քանի
 այլ գիտնականների հետեւալ ուսումնասիրութիւնները,
 որոնք վերաբերում են հայերէնին:

Bartholomae, Chr.—Beiträge zur armenischen Lautlehre
 (Beitr. z. Kunde d. indogerm. Spr., Bd. 20 H. 3, 1886).

Brugmann, Karl.—Grundriss der vergleichenden Gram-
 matik per indogermanischen Sprachen, Strassb. 1886.

Brockelmann, C.—Die griechischen Fremdwörter im
 Armenischen, ZDMG, Bd. 47, 1893.

Karst J.—Historische Grammatik der Kilikisch—Ar-
 menischen, Strassburg 1899.

Finck F. N.—Die ostarmenischen Laute des 15 Jahr-
 hunderts, Berl. 1906.

—Die Grundzüge des armenisch—Zigeunerischen Spra-
 chbaus, 1907 Liverpool.

—Die Sprache der armenischen Zigeuner, C. H. B. 1907.

Pedersen H.—Zur armenischen Sprachgeschichte, 1902.

—Albanisch und Armenisch 1900.

—Armenisch und die Nachbarsprachen, 1904.

—Հին հայերէն լեզուի շեշտը. (Հանդ. ամսօր. 1904 թ. 5).

Meillet A.—Notes sur quelques faits de morphologie,
 Paris 1899.

—Notes sur la conjugaison arménienne.—Note sur le
 mot տեսութիւն. Paris 1900.

—Esquiss d'une grammaire comparée de l'Arménien,
 Paris 1901.

—Etymologie arménienne, Paris 1904.

Lidén—Armenische Studien, Göteborg 1906.

Առանձին տեսակէտ ունի հայերէնի մասին պոռթ. Մառ (այդ մասին տ. «Հայկական ճիւղ»).

Այդ տեսակէտով է գրուած Մառի «Грамматика древне армянского языка», Этимология, С. П. Б. 1903 և մի շարք յօդուածներ (գլխաւորապէս «Известия Императорской Академии Наукъ» հանդիսութեամբ), որոնք վերաբերում են յարեթական լեզուաբանութեան:

Լեզուաբանութեան պատմութեան այս վերջին շրջանի նոյն իսկ ամենակարեւոր աշխատութիւններէ թուելը մեզ հեռուն կը տանի. յիշենք միայն ամենանշանաւոր լինդուիստներին ըստ մասնագիտութեան: Հնդկաիրանական լեզուներէ գլխաւոր ներկայացուցիչն այդ շրջանում հանդիսանում է Բարթոլոմէ, յունականինը Վակերնազել, Շուլցէ, գերմանականինը Պաուլ, Սիվերս, Քլուզէ, սլաւոնականինը Լիսկին, Բոդուէն դը Կուրտենէ, բալթիականինը Բեցենբերգեր և այլն:

Հնդեւրոպական լեզուաբանութեան գլուխ գործոցն այս շրջանում համարւում է Բոուզմանի հոչակաւոր Grundriss der vergleichenden Grammatik der indogermanischen Sprachen (ա. հատորն ա. տպագրութեամբ լոյս տեսաւ 1886 թ.), որի լրացումն է ենայի համալսարանի պոռթ. Դելլրիւքի համեմատական շարահիւսութիւնը: Այս գրքում հաւաքուած են Գ. շրջանի բոլոր կարեւոր ուսումնասիրութիւններէ եզրակացութիւնները:

Ներկայումս նկատուում են հետեւեալ լեզուաբանական ուղղութիւնները. — Լայպցիգի դպրոց, որի ղեկավարն է Բոուզման, այս դպրոցը երկրորդական դեր է յատկացնում բանասիրական ուսումնասիրութիւններին և կողմնակից է զուտ լեզուաբանական հետազօտութիւններին: Դա ամենաազդեցիկ և արդիւնաւոր դսրոցն է: Սրա զիտական օրգանն է Indogermanische Forschungen, որ հրատարակւում է Բոուզմանի և Շտրայտերգի խմբագրութեամբ: — Բեռլինի դպրոց, որ առաջացել է Բոպպի, ապա Բ. Շմիդտի ազդեցութեան տակ և որի գլխաւոր ներկայացուցիչն է ներկայումս Շուլցէ: Այս դպրոցն աւելի բանասիրական ձգտումներ ունի: Լայպցիգի ուղղութեան հակառակ օրգաններէից գլխաւորն է

Քուենի օրգանը (Kuhn's Zeitschrift), որ շատ կարեւոր դեր է կատարել լեզուաբանութեան մէջ ընդհանրապէս և որ այժմ խմբագրւում է Բեցցենբեր/երի, Քուենի և Շուլցէի ձեռքով: Այս և մի քանի այլ մանր ուղղութիւններ Գերմանիայում իրար լրացնելով ձեւացնում են մի ամբողջական գերմանական գպրոց, որին յարում են ուսանական և ֆրանսիական գպրոցները:

Ֆրանսիայում լեզուաբանութեան զարգացման մեծ դարկ տուեցին Բրէալ և մանաւանդ Դը Սոսիւր, իսկ ներկայումս՝ Հայագէտ Մէյէն: Իսկ Ռուսաստանում առաջացան միաժամանակ (եօթանասնական թուականներում) Բոդուէն-դը-Վուրտնէի (Կազան) և Փորտոնատովի (Մոսկուա) ուղղութիւնները, որոնք և տիրապետող են այժմ Ռուսաստանում: Բոդուէնի ամենատաղանդաւոր աշակերտը — Կրուշևսկի վախճանուեց երիտասարդ Հասակում, իսկ Փորտունատովի աշակերտներից տկաղեմիկոս Շախմատով այժմ համարւում է ուսւ լեզուաբանութեան սիւնը և ամենամեծ հեղինակութիւնը:

Լեզուաբանութեան մէջ մանաւանդ վերջին շրաններում մեծ կարեւորութիւն ստացաւ բարբառների ուսումնասիրութիւնը — բարբառաբանութիւնը, որ կոչուած է լրացնելու և ամբողջացնելու մեր ունեցած լեզուաբանական գիտելիքները: Մի կողմ թողնելով այդ մասում կատարած աշխատութիւնները, որոնք վերաբերում են զանազան հնդեւրոպական լեզուների բարբառներին, մենք մի փոքր կանգ կառնենք Հայ բարբառաբանութեան վրայ:

Հայ բարբառների ուսումնասիրութիւնը առաջ է զննցել համարեա հին գրական լեզուի (դարբարի) ուսումնասիրութեան զուգընթաց: Սակայն Հայ լեզուաբանութեան այս բաժինը խիստ պակասաւոր է, եթէ մանաւանդ ի նկատի ունենանք, որ եւրոպացիք այստեղ համարեա ոչինչ են արել:

Հայ բարբառների մասին գրուածքներ կան դեռ 18-րդ դարուց. (Շրէօդեր — Thesaurus linguae Armeniacae 1711 թ., այստեղ ուշագրաւ են մի քանի երես տեքստեր արեւելեան

բարբառներից) և 19-րդ դարի ա. կիսից (Շահան Զրպետ — Grammaire de la langue armenienne, 1823), բայց նրանք վաղուց արդէն հնացել են:

Առաջին արժէքաւոր բարբառաբանական հետազոտութիւնն է բժ. Գէորգ Ախվէլդեանի ուսումնասիրութիւնը Թիֆլիզի բարբառի մասին, որ նա կցել է իբրեւ ներածութիւն Սայեաթ Նովայի երգերի հրատարակութեան:

Հայ բարբառաբանութեան պատմութեան մէջ կարեւոր տեղ են բռնում հ. Ա. Այտընեանի և պոռֆ. Բ. Պատկանեանի համարեա միաժամանակ կատարած ուսումնասիրութիւնները:

Պոռֆ. Բ. Պատկանեանի գեո. 1864 թ. տպած իւր մագիստրոսական զիտերտացիայում (Изслѣдов. о составѣ армянскаго языка) ծանրանում է բարբառների ուսումնասիրութեան մտքի վրայ, իսկ 1866 թ. ներկայացնում է Ագուլիսի բարբառի ուսումնասիրութիւնը գերմաներէն լեզուով (Ueber den armenische dialect von Agulis, Բեռլինի ձեմարանի հրատարակած Monatschrift-ում):

1869 թ. լոյս տեսաւ Բ. Պատկանեանի Изслѣдованіе о діалектахъ армянскаго языка գիրքը, որտեղ Պատկանեան համառօտակի ուսումնասիրում է ձեռքի տակ զտնուած նիւթերի հիման վրայ Աստրախանի, Երեւանի, Թիֆլիզի, «քրդական» և Խոյի բարբառները, իսկ աւելի ընդարձակ՝ Ագուլիսի, Ղարաբաղի և Զուղայի բարբառները: Բերած են նմոյշներ և Մուշի, լեհաստանի, Նոր Նախիջևանի և Կիլիկիայի (12-րդ դարուց) բարբառներից: Կարեւոր է այստեղ Պատկանեանի խորհրդածութիւնը հայ բարբառաբանութեան մասին, որտեղ նա բացատրում է բարբառաբանութեան մեծ նշանակութիւնը, ցոյց է տալիս բարբառների յարաբերութիւնը դրաբարի հետ և բաժանելով բարբառները երկու խմբի՝ Արեւելեան և Արեւմտեան, որոշում է հայ բարբառաբանութեան ծրագիրն ու ապագայ ընթացքը:

Այս կարեւոր ուսումնասիրութիւնից զատ Պատկանեանը հրատարակեց 1875 թ. Матеріалы для изученія армянскихъ нарѣчій — երկու պրակ. — I. говоръ Нахичеванскій (սի. Ախ-

տամերկեանի պատմածները նոր նախիջևանի ոճով») և II. Мускскій діалектъ (Սասունցի Դաւիթ կամ Մհերի գուռ, 4 առակ և մի քանի երգեր):

Հ. Ա. Այտընեան 1866 թ. հրատարակեց իւր «Բրն-նական քերականութիւնը», որի «նախաշաւիղը» — 334 էջից բաղկացած, հետաքրքիր ուսումնասիրութիւն է բարբառների հնագոյն հետքերի, միջնադարեան և արդի բարբառների և նրանց զէպի զրաբարն ունեցած յարաբերութեան մասին: Արդի բարբառները Հ. Այտընեան բաժանում է 4 խմբի. 1) Միջին կամ Հայաստան (Միջագետք, Վան ևյլն) 2) Կ. Պօլիս և Փոքր Ասիա 3) Արևմտեան (Լեհաստան — Աւստրալ) և 4) Արևելեան (Աժտէրխան — Պարսկաստան): Հ. Այտընեան տալիս է այդ 4 խմբերի մանրամասն նկարագիրը, հիմք ունենալով ձևաբանութիւնը և անուշադիր թողնելով հնչիւնաբանութիւնը:

Ք. Պատկանեանի գործը շարունակողը եղաւ Ս. Սարգսեանց, որ 1883 թ. հրատարակեց իւր հռչակաւոր «Ազուլեցոց բարբառը», որ շատ լաւ ընդունելութիւն գտաւ և որ մինչև այժմ էլ համարւում է հայ բարբառաբանութեան վերաբերեալ լաւագոյն մոնոգրաֆիաներից մէկը: Դրքի Բ. մասը կամ «Ժողովածուն» պարունակում է նմոյշներ Ազուլիսի բարբառից, խնամքով և զիտական ուղղադրութեամբ գրուած:

1886 թ. հրատարակուեց Վիեննայի համալսարանի երիտասարդ դասախօս Եան Հանուշի O języku Ormian Polskich յօդուածը, որտեղ մէջ է բերւում լեհահայ բառերի մի ցանկ՝ լեհերէն և ֆրանսերէն թարգմանութեամբ և զրաբարի ու այլ բարբառների համեմատութեամբ: Իսկ հետեւեալ տարին՝ նոյն հեղինակի Beiträge zur armenischen dialectologie (Wiener Zeitschr. für die Kunde des Morgenlandes հանդիսում), որ ներկայացնում է լեհահայոց բարբառի հնչիւնաբանութիւնը:

Հետեւեալ երկու ուսումնասիրութիւնները պատկանում են Ա. Տումոնին (ներկայումս Օդեսայի համալսարանի լեզուաբանութեան պրոֆեսոր). առաջինը — Лингвисти-

ческія изслѣдованія — լոյս տեսաւ 1887 թ. և կազմում է Ախալցխայի բարբառի ուսումնասիրութիւնը, իսկ երկրորդը — Историческая Грамматика современнаго армянскаго языка города Тифлиса», С. Петербургъ, 1890: Սա աւելի մանրակրկիտ և կարեւոր ուսումնասիրութիւն է քան առաջինը:

Նոյն տիպի ուսումնասիրութիւն է նաև Լեւոն Մսերեանցի Մուշի բարբառի ուսումնասիրութիւնը — Этюды по армянской диалектологии վերնագրով, մասն I. Հնչիւնաբանութիւն (1897) և մասն II. ձևաբանութիւն (1901):

Մի քանի բարբառների ուսումնասիրութիւն տուել են Հր. Աճառեան (Ասլանբէկի, Սուչովայի, Ղարաբաղի և Վանի) Գաղանձեան (Եւդոկիոյ, 1899) և Մէլիք Դաւիթ րէկ (Մարաշի և Արաբկիրի): Վերջիններս Սարգսեանցի, Տոմսոնի և Մսերեանցի ուսումնասիրութիւնների համեմատութեամբ շատ թոյլ և հարեանցի են: Սոյն թւին հրատարակուեց նաև հ. Մ. Մարտիրոսեանի Ակնի ենթաբարբառի ուսումնասիրութիւնը «Le parler arménien d'Akn, Paris 1912.

Վերջապէս պէտք է յիշել Հր. Աճառեանի «Հայ բարբառագիտութիւն» գիրքը (1911 թ.), որ կազմում է էմիւնեան ազգագրական ժողովածուի 8-րդ հատորը: Գիրքը պարունակում է Հայ բարբառների մասին ընդհանուր ամփոփ տեղեկութիւններ և հանդիսանում է լաւագոյն աղբիւրը Հայ բարբառների մասին զաղափար կազմելու համար:

Մատենագիտութիւն.

— Benfey, Geschichte der Sprachwissenschaft und orientalischen Philologie in Deutschland, München 1869.

— Delbrück, Einleitung in das Sprachstudium Lpz. 5 Anfe.

J. Baudouin de Courtenay: Zarys historji jezykoznostwa czyli lingwistyki Warszawa 1909.

А Мейе, Введение въ сравнительную грамматику индоевропейскихъ языковъ, Юрьевъ 1911 г.

Ուսումնասիրութիւնը հայ լեզուի և մատենագրութեան յարեմուտս (ԺԴ—ԺԹ դար) Վենետ. 1895.

Կ. Կոստանեանց — Հայագիտութիւնն արեւմտեան Եւրոպայում, Թիֆլ. 1910.

H. Hübschmann, Armenische Grammatik, Leipzig 1895—97.

Ռ. Արաքեանեան.